


21774
209



4/6/88
1901

362

4-23



Յ Ե
ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՐՆ-ՈՐԲԱՆՈՑ
Ք ԱԲՎԲԸ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Դ. ՅԱՐԵՍՐԳԱՆԻ

(1900 ՄԱՐՏ 1 — 1901 ՓԵՏՐՈՒԱՐ 28)



ՎԻԵՆՆԱ 1901

ՄԻՆԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ



2010

362
Q-23 ա

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՑ
ՀԱՅԱԳԻՐԸ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Դ. ՏԱՐԵՅՐՃԱՆԻ

1005
99448

(1900 ՄԱՐՏ 1 — 1901 ՓԵՏՐՈՒԱՐ 28)



ՎԻԵՆԱ 1901

ՄԽԱԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

8790

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Հաստատութեանս հինգերորդ տարին մոտած
եմք արդէն. Եւ մինչ Չորրորդ տարեկան տեղեկա-
գիրը կը ներկայացնեմք Բարերարաց Եւ Նուիրա-
տուաց, սիրտերնիս իրական ուրախութեամք կը
լցուի՝ երբ կը բաղդատեմք ներկայ տեղեկագիրն
իւր նախորդներուն հետ, այսինքն, Որբանոցին ներ-
կայ կացութիւնն անցեալ չորս տարիներու կացու-
թեան հետ։ Ելք չորս տարւով յառաջ այս Որբանոցն
հիմնեցինք՝ սկզբնապէս ազգային անմիջական պէտք
մի լցուցանելու մոտք՝ ամենադառն եւ աղետակի
վիճակի մատնուած հայ որբուկներն ի կորսանենք
եւ քնաջինջ լինելէ ազատելու նպատակաւ, արդա-
րեւ մեր մոտաց մէջ ունէինք Հաստատութեանս հե-
ռուար ապագան՝ իբրեւ մնայուն Կրթարան հայ
մննկուոյն։ Սակայն մասամք այն ժամանակի
տագնապալից խնդիրներուն հանդէս եւ մասամք
եւս գործին գոեթէ սաղմանային որութեան մէջ լինե-
լուն պատճառաւ՝ չէինք կարող աւելի քան թէ ակն-
արկել այս վերջին նպատակին։ Եթէ հեռաւոր
ապագային մէջ մեր յուսացեալ արդիւնքն եւս
չկրնայ յառաջ քերել, կը խորհէինք յայնժամ, զո՞նէ
ներկայ ազգային թշուառութեան առաջն մասամք
առնելու կընայ նպատակ։ Արդ մեծ գորունակու-
թիւն կը զգամք, որ Աստուծոյ յաջողութեամք կարող

եղանք նոյն նպատակաւ հաստատուած ուրիշ ազգային որբանոցներու պէս նպաստել այդ նուիրական սիրոյ գործին, որքան կարելի էր սպասել մեր տրամադրութեան ներքոյ գտնուած միջոցներէն: Եւ հիմայ որքան որ այն ժամանակին տառապանաց աղիողորմ՝ աղաղակը չենք լսեր, դարձեալ չսփոխ մոռնանք որ մեզ պէս աղքատ ու թշուառացեալ ազգի մէջ որք եւ աղքատ ու մարդասիրութեան կարօտ տղայոց թիւը դեռ շատ շատ է: Եթէ մեզմէ աւելի քարերաստիկ ազգաց մէջ որբահնամ՝ հաստատութիւնք օր ըստ օրէ կը շատնան քան թէ կը պակսին, ապա որքան առաւել մեր ազգին կացութեան համար անհրաժեշտ են, մանաւանդ որ նիւթական աղքատութենէ աւելի մոռաւոր աղքատութիւն եւ չքաւորութիւն եւս կը տիրէ մեր մէջ:

Ուստի Խնամնակալութեանս համար (եւ կը յուսամք նաեւ քոլոր Բարերարաց եւ նուիրատուաց համար) Կիպրոսի Կրթարան-Որբանոցիս շարունակութիւնն այլեւս իննդրոյ առարկայ չէ: Զկնի քառամեայ գործունէութեան, մենք համոզուած եմք, եւ տարակոյս շունիմք որ Հաստատութեանս քոլոր քարեկամք մեզ համամիտ են, թէ Որքանոցս իւր գոյութեան, որպէս եւ իւր ապազայ շարունակութեան պատճառն եւ նպատակն լիովին արդարացուցած է: Խսկայդ նպատակին իրականացումը կարելի կը լինի միայն այն ժամանակ երբ Խնամնակալութիւնս ունենայ իւր տրամադրութեան ներքոյ՝ այնքան որոշ որամազլուին մը՝ որով գոնեայ տարեկան ֆ 250 Ուսկւոյ հաստատ հասոյթ մը գոյանայր: Այդ մասին մեր անցեալ տարոյ տեղեկազրին մէջ երկարուէն գրուեաւ: Հետեւաբար ատոր կարեւո-

րութեանը մասին ինչ որ արդէն ըստուած է, կրկին անգամ՝ խօսեն աւելորդ կը համարիմք: Ահա մենք Որբանոցիս քոլոր պէտքերը պարտ ու պատշաճ կերպին հոգալէն յետոյ՝ կրցած եմք սոյն շորքորդ տարեշրջանին վերջ ֆ 150 Ուսկի եւս քարդել մեր արդէն ունեցած ֆ 200 Ուսկւոյ պահեստի դրամին վրայ, որով այժմ՝ պահեստի դրամազլուին ֆ 350 Ուսկի ունիմք առժամապէս: Սակայն յայտնի է թէ մեր յառաջադիմութիւնն որամազլույ մասին շատ եւ շատ փոքր է եւ մեր ակնկալեալ ֆ 5000 Ուսկին տակաւին շատ հեռու կը գտնուի: Այսու ամենայնիւ մեր համոզումն այս մասին անփոփոխ է, եւ Որբանոցիս պէտքերը լիովին հոգալէն վերջը՝ իւրաքանչիւր տարոյ աւելցած արդիւնքը շատ կամ քիչ պիտի քարդեմք պահեստի դրամին վրայ. բայց մեր զիսաւոր քաղձանքն եւ յոյսն այն է, որ մերազգի կարող եւ կարեկից ազգային՝ տեսնելով մեր քուոն ջանքերն այս մասին, եւ աչքի առաջ ունելալով մեր առաջարկեալդրամազլուին կարեւորութիւնը, պիտի քարեհածին քացառիկ նուիրատուութեամք այդ ցանկալի դրամազլուին ժամ՝ յառաջ գոյացնելու եւ լրացնելու նպաստել:

Կրթարան-Որբանոցիս ներքին զարգացման եւ յառաջադիմութեան մասին՝ քարեսէք ընթերցողին ուշադրութիւնը կը հրակիրեմք Յարգոյ Տեսչին եւ Տնօրէն Խորհրդոյն ներկայ տեղեկազրիս վրայ: Ներկայ շրջանիս վերջն աշակերտաց թիւն 37ի հասած էր:

Քննութեանց արդիւնքը կը ցուցնէ թէ ինչքան հոգ տարուած է յարգելի Տեսչին եւ պատուական Տնօրէն Խորհրդոյն կողմանէ՝ իւրաքանչիւր առար-

կայ զգուշաւոր իննամքով աւանդելու մասին. եւ միանգամայն աշակերտաց փութաջանութիւնն եւ ուսումնասիրութիւնն յերեւան կը քերէ: Քննութեանց թուանիշերն, զոր պիտի տեսնեն Տեղեկագրոյս ընթերցողք՝ անցեալ տարոյ ընդհանուր ուսումնականին շրջամին կարի յոյժ գոհացոցից արդիւնքը կը յայտնեն: Մինչդեռ անգլիական դպրոցաց մէջ 100ին Յօջ գոհացոցից նիշ կը համարուի, եւ 100ին 50ը կարի քաջալու եւ առաջին կարգի ընթացաւարտի արդիւնք կը նկատուի, մեր Որբանոցին անցեալ տարոյ ուսմանց մէջ շահած ամենաստորին թիւն 72 էր եւ ամենաքարձն 95. եւ արհեստից մէջ 70ը ստորևագոյնն էր եւ 90 բարձրագոյնն:

Այս առաւելքան գոհացոցից տեղեկութիւնն եւս առաւել կը հաստատուի վկայութեամք՝ Կիպրոսի մէջ պաշտօնավարող անգլիացի Տարրոց՝ Գերամեծար Փարոն Սփէնսըրի, եւ նիկոսիոյ անգլիական Դպրոցին Ուսուցապետ վկայից համար: Փարոն Սփէնսըր դեռ աւելի յառաջ կ'երթայ, եւ մեր Որբանոցին արհեստանոցն կը ներկայացնէ իբրև դպրոցական մէկ տիպար ճիւղ՝ արժանի Կիպրոսի միւս դպրոցաց ընդորինակութեան: Անգլիացին ժանչցողը միայն գիտէ թէ ինչ արժէք ունի այսպիսի կէտերու մէջ վերին աստիճան բժախնդիր Անգլիացոյն վկայութիւնը: Այս առթիւ մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնեմք սոյն երկու մեծարգոյ Անգլիացոց բարեկամական ճեռնոտութեան եւ քաջալերութեան համար, մանաւանդ Փարոն Սփէնսըրին, որ Որբանոցին հիմնարկութեան օրէն ի վեր այդ հաստատութեան վրայ առանձին սէր եւ իննամք ունեցած է:

Տնօրէն Խորհրդոյն ծախուցոյցն եւ Խնամակալութեանս ընդհանուր հաշուեկշիռն կը վկայէն որ Որբանոցիս պէտքերն կը հոգացուին ամենալաւ կերպով եւ միանգամայն զգուշաւոր իննայողութեամք:

Այս մասին ամենայն գովեստ եւ շնորհակալութիւն կը պատկանի պատուական Տնօրէն Խորհրդոյն, որոյ մեծարգոյ անդամն անգին ծառայութիւն մաստուցած են եւ անձանձիր կը մաստուցանեն Հաստատութեանս: Առանց Տնօրէն Խորհրդոյն անձնուէր աշակերտեամք՝ բացարձակապէս անկարելի պիտի լինէր Որբանոց ներկայ բարեկարգ որութեան մէջ պահելու կառավարել, որով քնականաբար Խնամնակալութեանս որպէս եւ Նուիբատուաց եւ Բարերարաց ջանքերն ապարդին պիտի մնային: Անտարակոյս մեծաւ մնաամք Պատուական Տնօրէն Խորհրդոյն իմաստութեան կը պարտիմք այն բարեկամական յարաբերութիւնը, որ կը տիրէ ի մէջ Կիպրոսի մերազգի քնակչաց եւ Որբանոցիս: Նուիբատուաց ցուցակէն պիտի տեսնուի թէ ինչքան հետաքրքրութեամքնիկոսիոյ Ազգայինք կը խնամնն իւրեանց մէջ հաստատուած Որբանոցս. շատեր իւրեանց կարողութեան չափով մարդասիրութիւն եւ Հայու փափկազգացութեամք հիւրասիրութիւն ցոյց կու տան եւ իւրեանց արմտիքէն բաժին կը հանեն Որբանոցիս աշակերտաց. եւ ընդհանրապէս Որբանոցս իւրեանց կղզոյն սիրական ազգային հաստատութիւնը կը նկատեն: Շատ կարեւոր, միանգամայն կարի ուրախալի եւ վստահեցոցից է տեսնել որ Կիպրոսի պատուական Հայերն իւրեանց ձեռքէն եկածը չեն ինայեր եւ իրաւամք պարծանք

կը զգան իւրեանց մէջ ունենալով այդ Ազգային
Կրթարանն:

Այս առթիւ կը կրկնենք Խնամնակալութեանս
անկեղծ շնորհակալութիւնն այն բոլոր նուիրատուաց
եւ Բարեբարաց որք շարունակեցին եւ կը շարունա-
կեն իւրեանց մարդասիրութիւնն առ Որբանցու՝
տարեկան նուէրներով կամ՝ մասնաւոր սանուց
ծախքերը հոգալով, որպիսիքն են Փարիզու Ռւսու-
մասիրաց Ընկերութիւնն, Գանիրէի Ազգային Բարե-
գործական Ընկերութիւնն, նոյնակէս եւ Որբասիրաց
Ընկերութիւնն: Նոյն քաղաքին Մեծ. Պետրոս Էֆ. Կա-
ռապետեան եւ Վահեմ. Տիգրան Փաշա Ապրօ եւ այլքն
ամենայն: Նոյնակէս շնորհակալ եմք այն բոլոր պա-
տուական Ազգայիններէն՝ որք այլեւայլ պիտոյքներ,
գրքեր եւ թերթեր նուիրած են Որբանցիս: Այլ եւ
մասնաւորապէս ամենաչերմ՝ շնորհակալութիւնն կը
պարտիմք Փարիզու եւ Լոնտոնի Օժանդակ Մասնա-
ժողովոյն պատուական անդամոց, որոնց թանկազին
աշակցութիւնն եւ ջանքը մեծապէս օգնած են Կրթա-
րան-Որբանցիս ներկայ բարեյաջող վիճակին:

Խնամնակալութիւնն Ազգ. կրթարան Որբանցին
որ և Կիպրոս:

Մանէստըր, 30 Ապրիլ 1901:

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՑԻ

Ի ԿԻՊՐՈՍ

ԽՆԱՄՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

- Խախագահ, Արժ. Տ. Թորոս Քահանայ Խսահակեան
Վ. Ա. Հոգեւոր Հովիտ Հայոց ի Մանչեսթըր:
Ատենասպետ, Մեծ. Տիգրան Ա. Մ. Jamgochian Esqre, Manchester.
Գանձապահ, Մեծ. Տիգրան Եղիազարեան,
S. Eliazarian Esqre, Manchester.
Պատուական Քարտուղար, Մեծ. Տիգր Յոհաննէս Ան-
դրէասեան, Հաշտարար Դատաւոր,
O. Andreasian Esqre, J. P., Manchester.

ՏՆՈՐԻՆ ԽՈՐՀՈՒՐԻ Ի ՆԻԿԱՍԻԸ (ԿԻՊՐՈՍ)

- Խախագահ, Արժ. Տ. Պետրոս Վարդապետ Սարաձեան,
Առաջնորդ Կիպրոսի:
Ատենասպետ, Մեծ. Տիգր Աբիսողոմ Կոթիւձեան, Առա-
ջնորդ Թարգման Կառավարութեան:
Ատենասպիր, Մեծ. Տիգր Յարութիւն Մէլիքեան:
Գանձապահ, " " Աբգար Կիւվէզեան:
Տեսուհ, " " Վահան Քիւրքձեան:
Տնօրէն Խորհրդին Հասցէն և Դիրքութիւն Կ' Հարութիւն Նիկոսիա (Կիպրոս)՝

ՕՓԵՆԴԱԿ ՄԲՍՆԵԺՈՂՈՎ Ի ԼՈՒՏՈՆ

Առենապետ, Մեծ. Տիար Ներսէս Ներսէսեան, Գերշիւպատոս Պարսկաստանի,
N. Nersessian Esqre, 48 Doughty Street,
Mecklenburgh Square, London, W. C.

Գևոնձապահ Եղիշ Քարտուղար, Մեծ. Տիար Ա. Ահել-
պենկեան,
A. Gulbenkian Esqre, 2 Holland Park
Avenue, London, W.

ՕՓԵՆԴԱԿ ՄԲՍՆԵԺՈՂՈՎ Ի ՓԱՐԻԶ

Նախագահ, Արք. Տէր Վուամշապուհ Քահանայ Քի-
պարեան:

Առենապետ, Մեծ. Տիար Յովսէփ Խոբէնտէր,
Monsieur J. Iskender, 36 rue de la
Tour-d'Auvergne, Paris.

Գևոնձապահ, Մեծ. Տիար Կարապետ Բէհլիվանեան,
Monsieur G. Péhlivanian, 15 rue
Chateaudun, Paris.

Դեր-Առենապետ, Մեծ. Տիար Յ. Միքայէլեան:

Առենադպիր, Տօքթօր Սըքըեան:
Տիգրան Խան Քէլէկեան:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Արժ. Նախագահ Եւ Մեծ. Անդամք Խնամիակալութեան
Ազգ. Կրթարան-Որբանոցին Կիպրոսի
ի Մանչեսթրո:

Տեարք,

Պատիւ ունինք Ձեր նկատողութեան ներկայացնելու
Հաստատութեանս ըրբորդ Տեղեկագիրը, որ կ'ամփոփէ
1900 Մարտ 1էն մինչեւ 1901 Փետրուար 28 տեւող
տարեշրջանը:

Ո Կ Ս Ե Ն Ո Ղ Ք

Գոհունակութեամբ կրնանք յայտնել որ մեր ուսանողք
արդիւնաւոր տարի մ'ալ բոլորեցին՝ իրենց մտաւոր եւ
բարյական զարգացման տեսակէտով։ Կարգապահութիւնն,
բարեկրթութիւնն եւ կանոնաւոր աշխատութիւնն սովորա-
կան վիճակ դարձած լինելով՝ ուսմանց զանազան ձիւղերուն
մէջ, ինչպէս եւ ընդհանուր դաստիարակութեան մասին,
նոցա համար կատարուած ջանքերը բաւական յաջողու-
թեամբ պսակուած կը տեսնուին։

Մասնաւոր ուրախութիւն կը պատճառէ մեղ որ եօթը
աշակերտներէ զատ — երեքն ընթացաւարտ — որոնք
վերջացող տարւոյն մէջ մեկնեցան Որբանոցէն՝ յառաջիկայ
արձակուրդին, այսինքն Յունիսի վերջը, պիտի ունենանք
աւելի թուով եւ աւելի պաշարով լնթացաւարտներ։ Կը

փափագինք հոս պահել ասոնց յարմարագոյնները՝ իրենց
ուսմունքն ընդարձակելու եւ միեւնոյն ժամանակ Հաստա-
տութեանս ծառ այելու համար:

Թէեւ կրթաբան-Որբանոցիս ուսմանց Յայտագիրը կը
պարունակէ աւանդուած բոլոր առարկաները՝ բայց աւելորդ
չենք համարիր այս տեղ նշանակել զանոնք, մի քանի
մանրամասնութիւններով, ցոյց տալու համար թէ չորս
տարւան մէջ ի՞նչ սովորած են մեր սաները, որոնք մեծ
մասամբ, հազիւ թէ պարզ ընթերցանութիւն (ոմանք եւ
ոչ իսկ այդ չափ) գիտէին իրենց ընդունուած պահուն:

ՀԱՅԵՐԻՆ. — Ընթերցմոնք եւ բացատրութիւնք, բա-
ռագիտական վարժութիւնք, շարադրութիւն, ուսումն ի
բերան աշխարհաբար արձակ եւ ոտանաւոր գրուածոց,
Քերականութիւն աշխարհաբար եւ գրաբար:

(Դաստիարակութիւն. — Մայրենի լեզու Տէր Ղեւոնդեանցի,
չորս մասերը: Տարր. Քերականութիւն Ա. Գաւիթեանի:
Գրաբար Քեր. Պ. Յակոբեանի: Հաւաքածոցք Ա. Գա-
փամաճեանի, եւն:)

ԹՈՒՐՔԵՐԻՆ. — Ընթերցումն, ուղղագրութիւն եւ թարգ-
մանութիւնք:

(Դաստիարակութիւն. — Ընթացք Օսմ. Լեզուի Կ. Թորո-
սեանի, “Իման” եւ “Րիսալէի ախլագու Ալի Կազիմայի,
Կէդայիֆի ասարու Մ. Աբիկեանի, Ա. եւ Բ. մասեր:)

ԱՆԳԼԻԵՐԻՆ. — Ընթերցում, թարգմանութիւնք, ի բե-
րան ուսում ընտիր հատուածոց, Քերականութիւն, խօ-
սակցութեան վարժութիւնք:

(Դաստիարակութիւն. — Collin's Graphic Readers, Ա. —
Պատրիները: Poems for the schoolroom: Քերա-
կանութիւն ըստ Թ. Կասբէի:)

ԳՐԱՆՑՈՒԹԻՒՆ (Մասնաւորաց). — Ընթերցում, թարգմ.,
օժանդակ բայեր:

(Դաստիարակութիւն. — Այբբենարան Դ. Թէրզեանի:
Lectures Enfantines. Գ. մաս, եւն:)

ԿՐՈՆՔ. — Քրիստ. Վարդապետութիւն, չմուտ կրօնագի-
տութիւն, Պատմ. Հայ. Եկեղեցայ:

(Դաստիարակութիւն. — Մանր Ուսմունք միաց. Ընկերու-
թեան: Կրօնագիտութիւնք Հաբէլեանի եւ Տ. Աահակ
Տ. Սարգսեանի:)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Ազգային եւ Եկեղեցական Ս. Գրոց
պատմ., Օսմանեան պատմ.:

(Դաստիարակութիւն. — Ազգ. Պատմ. Մամուրեանի: Եկեղ.
Պատմ. Մելք. Եպ. Մուրատեանցի, Համառօտեալ:
Սրբազն Պատմ. Խորէն Եպ. Կարպէյի: “Քիւչիւ Թա-
րիսի Օսմանին, Ալի Կազիմայի:”)

ԱՇԽԱՌԱՎՐՈՒԹԻՒՆ. — Բնական, քաղաքական եւ (հա-
մառօտ) ուսումնական:

(Դաստիարակութիւն. — Տ. Պօղաճեանի, Գր. Մարգա-
րեանի:)

ԹՈՒՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — Տեսական եւ գործնական:

(Դաստիարակութիւն. — Տ. Պօղաճեանի Համառօտը.
Յ. Փալագաշեանի Ընդարձակը:)

ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — (Տօթք. Սաֆրէի գործին թարգմա-
նութենէն:)

ՆԱԽԱՏԱՐԵՐՔ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ.
— (Ե. Թէյեանի գործէն:)

ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԴԱԿԱՄՁՈՒԹԻՒՆ. —
Տարրական գիտելիք (Քերանացի):

ԳԻՒ ԵՒ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ. — ՀԱՍԱՐԱԿ Եւ զարդի դրեր,
ԵՐԿՐՈՎԱԼԻՎԱԿԱՆ ՃԵՆԵՐ, անօթներ, մարմնոյ մասեր,
ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐ, բջուեր, աշխարհագրական քարտէներ,
— բոլորն ընդօրինակութեամբ:

ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ. — ԱՅԼ Եւ այլ մարզանքներ:

Այս առարկայից մէջ, կրնակը ըսել որ մեր Յայտագրին
համեմատ պահանջուած հմտութիւնը գոհացուցիւ կերպով
ամբարած են մեր ուսանողք, եւ եթէ իրենց մի քանին ի
բնէ չեն օժտուած սուր մաքերով՝ աշխատասիրութեամբ
յաջողած են բաւարար թիւեր ստանալու:

Տարեկան քննութեանց եւ բոլոր դասաւանդութեանց
միջոցին ամէն մէկ ուսանողին ստացած միջին նիշերը, ինչպէս
եւ վարուց եւ արհեստից աստիճանները նշանակուած են
յատուկ ցուցակի մէջ: Անցեալ Յուլիս ամսոյ առաջին օրը
կատարուած պարգեւաբաշխութեան հանդիսին մէջ, —
որուն ներկայ էին նաև կղղլոյս կրթական Տեսուչը, կանոնի-
կոս Սբենսըր, եւ Նորահաստատ անդը. Վարժարանին Տնօ-
րէնը՝ Արժ. Մր. Նիւհամ — աշակերտներուն կատարած
հայերէն, թիւերէն եւ անդիներէն արտասանութիւններն
եւն, անսոց ընդհանուր երեւոյթը՝ նպաստաւոր տպաւորու-
թիւն թողուցին բոլոր ներկայից վրայ: Մտաւոր մշակու-
թեան տեսակէտով ոչ նուազ ուշագրաւ յաջողութիւն մը
կը նկատենք այն ներկայացումը, ազգային կեանքէ առնուած,
զոր մեր սաները կատարեցին վերջացող տարեշրջանին առա-
ջին օրը, Մարտ 1ին: Թէեւ ձեռնարկը նիւթական փոքրիկ
հասոյթին համար յլացուած էր՝ բայց գործադրութեանը
մէջ ակներեւ տեսնուեցաւ թէ մեր ուսանողները որչափ լաւ
վարժուած էին հայերէնը մաքուր արտասաններու, դաշտ-
փարները գիտակցութեամբ եւ զգացմամբ արտայայտելու
եւ շարժումները վայելապէս ուղղելու արուեստաներուն մէջ:

Տարակյս չկայ որ հաստատութիւնս աւելի բախտաւոր
պիտի լինէր եթէ մեր ելեւմաից պայմանները թոյլ տային
ուսուցչաց թիւը ցարդ աւելցնելու: Ուրախ ենք սակայն որ
նպատակայարմար նոր ուսուցչի մը հետ համաձայնութեան
եկած ենք եւ նորա ի մօտոյ գալստեան կը սպասենք:

Խնայողութեան հարկին մէջ գտնուեցանք նոյնպէս
գասագբերու ընտրութեան մասին: Ասոնց մէկ մասն իբրեւ
նուեր ստացուած գործեր են:

Յիշատակութեան արժանի կը դատենք մեր աշակերտաց
ընթերցասիրութեան ոգին: Այսնպատակին համար որոշուած
ժամերու մէջ՝ նոքա կը պարապին հրահանգիւ եւ օդտակար
գրքերու ընթերցումներով: Այս կարգի ընթերցումներուն
համար կազմուած է արդէն փոքրիկ գրադարան մը, որուն
մէջ մեծագոյն տեղը կը գրաւեն՝ Բարիդիւն Խնան Լուսի-
նեանի, Մանշեսթրուն՝ Մեծ. Յ. Անդրէասեանի, եւ Վենե-
տիկէն — վերջերս նաեւ Վիեննայէն — Պատ. Միհթարեան
Միաբանութեանց նուիրած զանազան գրքերը: Փափագելի
էր որ նորանոր նուերներով ճոխանար կրթարան- Որբանոցիս
գրադարանը:

Մեր գործին արդիւնաւորութիւնն աւելի եւս պիտի
լինէր եթէ կարենայինք ցարդ աւելցնել նախապէս ծանու-
ցեալ տասը նոր որբերը: Փոխադրութեանց դժուարութեան
պատճառով այս նպատակին իրագործումը պահ մը յապազած
լինելով՝ ինդիրը յետաձգելու մասին Պատ. Խնամակալու-
թեանդ հրահանգին համեմատ՝ վերջին շրջանիս մէջ ալ
մեր ձրիավարժ ուսանողաց թիւը 23 էն աւելի չեղաւ:

Թոշակաւոր աշակերտաց թիւն ալ, մէկնողներուն տեղ
ընդունուած նորմեներով՝ կը մնայ նախկին համեմատու-
թեան մէջ: Հաճութեամբ կը տեսնենք որ մեր թոշակաւոր-
ները, հեռանալէն վերջ ալ մեծ մասամբ ջերմ սրտով կա-
պուած կը մնան հաստատութեանս հետ, եւ անոնք իսկ որ

բարձրագոյն վարժարանաց մէջ մասնաւոր ասպարէզներու կը պատրաստուին՝ գիտցած են գնահատել այստեղ տրուած նախակրթութեան արժէքը:

Մեր սաներուն առողջութեան գալով՝ այս տարիշը ջանին մէջ նախընթացներէն աւելի գոհունակութիւն զգալու վիճակին մէջ ենք: Մտահոգութիւն պատճառող և եւ է հիւանդութիւն, եւ ոչ իսկ զերմի կարեւոր դէպքեր տեղի ունեցան: Այս տարւան ամրան միջոցին ալ երկամսեայ օգափոխութիւն մը կատարուեցաւ Ս. Մակարու վանքին մէջ:

ԵՐՅԵՍՏԵԿԱԿԱՆ ԹԻՒԳ

Դերձակութեան եւ կօշկակարութեան վարժութիւնները շարունակուեցան նախընթաց շըջանին պէս, առաջինը՝ վճարեալ վարպետի մը, եւ վերջինը՝ մեր յաջողագոյն աշակերտներէն միոյն առաջնորդութեամբ, եւ պատրաստուած զգեստներն ու կօշիկները Որբանոցին պէտքերուն միայն ծառայելու պայմանաւու:

Արշեստից ճիւղերուն մէջ մեր աշակերտք կրնային աւելի յառաջանալ եթէ կարելի լինէր ճարել՝ սովորեցնելու աւելի տրամադիր վարպետներ, մեղ համար հնարաւոր եղած վարձատրութեամբ: Այսու հանդերձ, առաջիկայ շըջանին համար վարպետներու մասին նոր կարգադրութիւններ ըրած, եւ տեղական հանգանակութեամբ կարի լաւ մէքենայ մ'ալ գնած լինելով՝ կը յուսանք զգալի բարեփոխում մը յառաջ բերել:

Ֆ. Ա. Խ. Ա. Հ. Ե. Ա. Վ. Ե. Բ.

Զորբորդ տարեցընին ծախքերը մանրամասնօրէն նշանակուած կը տեսնուին կցորդեալ հաշուեցուցակին մէջ, որու գումարն է 335 անգլ. սոկի, 11 շիլին եւ 7 բէնի: Ասկէ զեղչելով պատրաստ պաշարի, արշեստանոցի նիւ-

թերուն եւ այլոց արժէքը, գրեթէ 20 սոկի, կը մնայ 315 սոկոյ չափ գումար մը, որ է խորհրդոց ձեռքով կատարուած ծախուց ամբողջութիւնը:

ԵՐՅԵՍՏԵԿԱԿԱՆ ՑԻԱԾՏԵԿՈՒԹԻՒՆ

Տեղեկադիրս փակելէն առաջ կը զգանք նշանակելու այն յարգանքի պարտականութիւնները, զորս վերջացող տարեշընին մէջ խորհուրդս կատարեց՝ ի յիշատակ հաստատութեանս զերմ բարեկամ երկու հանգուցեալ անձնաւորութեանց — խորէն Սրբազն Ստեփանէի եւ Մեծ. Մատթէոս Մամուրեանի: Առաջինն՝ անցեալ տարւան դրամական կարեւոր նպաստէն զատ՝ ձեռնարկած էր մեծագոյն օժանդակութիւն մ' լնծայելու միջոցներուն: Երկրորդը՝ Աբեւելքան Մամլյան միջոցաւ բարոյական մեծագին աջակցութիւն լնծայեց մեղ՝ Որբանոցիս բացման առաջին օրերէն սկսեալ մինչեւ իր կենաց վերջին ամիսները:

Խորհրդոց խնդրանք՝ մեր Կամագահ-Առաջնորդն, — խորէն Սրբազնին համար հոգեհանգստի պաշտօն մ'ալ կատարելով՝ — երկու հանգուցեալներուն մեծ ծառայութիւնները դամբանական քարոզովն ի մէջ բերաւ եւ նոցասիրելի անուններն օրհնութեամբ յիշեց եկեղեցւոյ բեմն:

Երկար կեանք մաղթելով ազգիս բոլոր աշխատաւորներուն՝ մմամք յարգանք

Անդամիք Տնօրինել Խորիրդոյ

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԱՃԵԱՆ
Նախազարդ:

Ա. ԿԻՒՎԵԶԵԱՆ

Գանձապահ:

Ա. ՄԵԼԻՔԵԱՆ

Կիպուր (Կիպուր), 28 Փետրուար 1901:

Ա. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Առնապահ:

Ա. ՔԻՒՄԻՃԵԱՆ

ՀԱՅՈՒԵՑՈՅՑ ԶԱԽՈՒՑ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

(1900 Մարտ 1 — 1901 Փետրուար 28):

	Անդր.	Անդր.	Բէկի	Անդր.	Անդր.	Բէկի	Անդր.	Անդր.
ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՉՔ				24	—	—		
Աթա Պէյի տան համար								
ԿԱՀԿԱՐԱՍԻՔ				8	6	7		
Դասարանաց, սեղանատան, ննջարանի և խոհանոցի պէտքեր								
ԴԱՍՍԿԱՆ ԱՌԱՐԿԱՑՔ				3	16	4		
Գլուխք, գրք և գծագրութեան պէտքեր								
ՈՒՏԵՍՏԻ ԾԱԽՔ				163	18	5		
Միջին հաշուով 31 աշակերտի համար .								
ԶԱՆԱԶԱՆՔ								
Օժառ	7	6	9					
Լուսացք եւ բաղնիքք ծախք	4	12	3					
Բժիշկ եւ զեղորայք	2	14	4					
Թղթակցութեանց ծախք	3	3	5					
Լուսաբարութեան քարիւո	3	5	8					
Փայտ, լուսացք եւ փուռի համար	7	9	4					
Ածուխ	7	17	6					
Զաղացքի վարձք, ալիւք եւ ծաւաք աղալու	2	8	6					
Վանք երթեւկութեան առթիւ ծախք .	5	13	—					
Նորոգութիւնը, լուսացարանի, փուռի, ջուր- ովներու ենան	3	10	2					
Նոր գլխարկներ	1	2	4					
Որրերու ճամփորդութեանց համար .	1	8	5					
Այլեւալք . (փոխադրութիւնը, ծառայու- թիւնը, ներք, կւայեկ, լուցկի, ծրագ. աւել, մոխիք, հականեխականք, կիրեւն)	7	7	9	57	19	5		
ԵՐՃԵՍՏԱՆՈՑ								
ԴԵՐՁԱԿՈՒԹԻՒՆ								
Վարպետի 7½ ամսական .	7	10	—					
Հանդերձեղէն ապամոնք եւ								
զորքիք	24	1	1					
ԿՕՇԿԱԿԱՐՈՒԹԻՒՆ								
Կաշեղէն եւ զորքիք	15	11	3	39	12	4		
ՊԱՏՈՒՔԻՑ ԹՈՇԱԿԱՆԵՐ				37	18	6		
				335	11	7		

28 Փետրուար 1901, Նիկոսիա (Կիպրոս):

Ասան ծցլութեան ստորագրեալ:

ԳԵՏՐԱԾ ՎԵՐԹԱԳԵՏ ՍԵՐԱԲԵՅՆ

Ա. ՔԻՆՐԵՑԵՅՆ Ա. ԿԻՒՎԵԶԵՅՆ Ա. ՄԵԼԻՔԵՅՆ Ա. ԻՒԹԻՒԹԵՅՆ

ՈՒՍԱՆՈՂՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ	ՎԱՐԺՐԵՆԻՔ	ՎԻՃԱԿ	ՄԻՔԻՆ ԲԺԻՆ ՆԻՒԿՐՈՒ		
			Վարչ	Բառու	Անդամ
Դ. ԴԱՍՍԱՐԱՆ					
Մովսէս Սուլթանեան .	Նիկոսիա	Երժեւեկ	96	95	87
Յակոբ Շամշեան . . .	Խաբէնտէր	Թոշակաւոր	95	93	90
Յովսէփ Յովսէփեան .	Լարնաքա	"	—	—	—
Պօղոս Ալեքսանեան . . .	Մարաշ	Զրիալարժ	97	92	85
Ռափայէլ Փիլիպպոսեան	Սօղուլուդ	"	95	88	80
Սեղրաք Աճէմեան . . .	Տիարպէքիր	"	90	87	90
Սիմոն Վանեան . . .	Ակն	"	90	91	80
Տիգրան Գրիգորեան . . .	Տիարպէքիր	Թոշակաւոր	90	87	87
Տիգրան Թօփալեան . . .	Կիւրին	Զրիալարժ	96	91	90
Գ. ԴԱՍՍԱՐԱՆ					
Արմենակ Աթանասեան .	Ատանա	"	90	90	83
Արմենակ Գրիգորեան . . .	Հալէպ	"	90	91	85
Գասպար Կարապետեան	Պաղչէ	"	86	80	85
Խորէն Նազարէթեան . . .	Այնթապ	Թոշակաւոր	86	82	—
Յովհաննէս Պէրպէքեան	Քիլս	Զրիալարժ	97	87	88
Սարգիս Պետրոսեան . . .	Հասանպէլլի	"	90	86	85

	ՀԱՅՐԵՆԻՔ	ՎԻՃԱԿ	ՄԻՔԻՆ ԺԻՆ ՆԲՇԵՐՈՆ		
			Վ.	Ա.Վ.	Ա.Վ.
Բ. ԴԱՍՏԱՐԱՆ					
Աւետիս Աղամանեան	Արաբկիր	Զրիալարժ	92	81	75
Գարեգին Հաղարապետեան	Տարէնտէ	Թոշակաւոր	88	86	73
Լեւոն Գաղանձեան	Երզնկա	Զրիալարժ	88	81	75
Լեւոն Շալճեան	Տիարպէքիր	"	81	89	75
Ղեւոնդ Աճէմեան	Պիլէճիք	Թոշակաւոր	89	92	77
Մարտիրոս Պալթաեան	Արաբկիր	Զրիալարժ	90	93	75
Մկրտիչ Գարագաշեան	Սիվոհիշսար	Երթեւեկ	88	89	80
Ռուբէն Թագւորեան	Անջրդի	Զրիալարժ	81	93	80
Սարգիս Մելիքեան	Արաբկիր	Թոշակաւոր	86	80	—
Սմբատ Աճէմեան	Տիարպէքիր	Զրիալարժ	88	88	—
Տիգրան Սուլթանեան	Նիկոսիա	Երթեւեկ	90	85	79
Ա. ԴԱՍՏԱՐԱՆ					
Աբրահամ Զաղասեան	Քիլիս	Զրիալարժ	81	83	70
Արամ Շալճեան	Տիարպէքիր	"	81	82	70
Գառնիկ Գէորգեան	Գ.ա.հիրէ	"	85	82	72
Գեղամ Ճիզմէճեան	Երզնկա	"	75	72	—
Հայկ Սամուելեան	Կ.Պոլիս	Երթեւեկ	83	86	—
Միհրան Աբրահամեան	Պէյրութ	Զրիալարժ	89	83	73
Միհրան Ստեփանեան	Տիարպէքիր	Երթեւեկ	85	82	—
Սեղրաք Ժամլոչեան	Արաբկիր	Թոշակաւոր	80	78	—
Վահան Ճէրրահեան	"	"	86	78	—
Վահան Շիշմանեան	Կ.Պոլիս	Երթեւեկ	80	81	—
Վենսան Պրածօդի	Լարնաքա	"	—	—	—

ՏԱՐԱՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹՈՅ ԶԵՄՐՅՈՎ ՍՏԱՑՈՒԱԾՈՒՅ

ԴՐԱՄԱԿԱՆ ՆՊԱՍՆԵՐ

ԱՆԳԼ. ՈՒՂԻ ՇԵԼ. ԲԵՆԻ

Գեր. Պետրոս Վարդապետ Սարաձեանէ,	Նիկոսիա	1	—
Տիար Կարապետ Նիկողոսեանէ, Նիկոսիա,	իր ամուսնութեան առթիւ	1	—
Monsieur Emile Lenoir, Paris (20 Frs.)	—	15	10
Տիար Մինաս Ճէլլատեանէ, Նիկոսիա	—	2	—
Տիար Գէորգ Գրիգորեանէ, Նիկոսիա	—	2	—
Արժ. Եղնիկ Քահանայ Պալունիէի, Գաւհիրէ	—	10	2
Տիար Սեղրաք Թուլումճեանէ, Լարնաքա (Ամերիկա կամ ուրիշ կողմ ճամբորդող գաղթական ազգայնոց ընծայուած գիւրութիւններու փոխարէն՝ յանուն մի բարենպատակ գործի ստացուած նուէրներու գումարը)	3	13	—
ԱՆԳԼ. ՈՒՂԻ	7	3	—

ՀԱՆԳԱՆԵՎՈՒԹԻՒՆ Ի ՆԻԿՈՍԻԱ

ԿԱՐԻ ՄԵԳԵՆԵՍ ՄԷ ԳՆԵԼՈՒ ՀԵՄԱՐ

ԱՆԳԼ. ՈՒՂԻ ՇԵԼ. ԲԵՆԻ

Տիար Վարդան Յ. Խանիկեան	1	10	—
" Արթին Մելիքեան	—	12	—
Տիկին Ա. Իւթիւճեան	—	10	—
" Գ. Թունդայեան	—	6	—
ԱՆԳԼ. ՈՒՂԻ	2	18	—

	Առողջ.	Ոսկի	Շել.	Բնակ.
Փոխադրի	2	18	—	
Տիկին Արտեմ Պէլէրեան	—	5	—	
Տիար Ա. Խթիւճեան	—	5	—	
” Ա. Կիւլէզեան	—	5	—	
” Գէորգ Սուլթանեան	—	5	—	
Տեարք Փէշտիմալճեան Եղբարք	—	5	—	
Տիկին Ռմի	—	4	—	
Տիրամայր	—	4	—	
Տիար Յովակիմ Յովսէփեան	—	4	—	
” Սարգիս Տէյիրմէնճեան	—	3	—	
Տիկին Հայկանց Սարգիսեան	—	2	—	
” Մ. Մ. Ճէլլատեան	—	2	—	
Տեարք Հ. Աւետիս Եւ Կարապետ	—	2	—	
Պօղոսեան	—	2	—	
Տիար Մինաս Մամասեան Զավուշ	—	2	—	
” Մագսուտ Ստեփանեան	—	2	—	
Յակոբ Երամեան	—	2	—	
Ստեփան Գրիգորեան	—	2	—	
Սարգիս Փիլօ - Քէհեանեան	—	2	—	
Պետրոս Իսքէնտէրեան	—	1	6	
Գրիգոր Ճէլլատեան	—	1	—	
Կարապետ Բամուգեան	—	1	—	
Կիրակոս Կէօլճիւկեան	—	1	—	
Հ. Գէորգ Շահնենեան	—	1	—	
Յովչաննէս Իմիրզանեան	—	1	—	
Յովչաննէս Կարապետեան	—	1	—	
Յարութիւն Ճէլալեան	—	1	—	
Ռմի	—	1	—	
Ռմի	—	1	—	
Անդ. Ոսկի	6	6	6	

	Առողջ.	Ոսկի	Շել.	Բնակ.
Փոխադրի	6	6	6	
Տիար Սարգիս Էմիրզանեան	—	—	—	1
” Սարգիս Պօղչալեան	—	—	—	1
” Վարդան Տէմիլճեան	—	—	—	1
” Աւետիս Ստեփիանեան	—	—	—	6
Անդ. Ոսկի	6	10	—	
(Այս հանգանակութիւնը շարունակելի լինելուն համար՝ տարւոյս հաշուեկշոյն մէջ չէ անցած:)				
<hr/>				
ՆՈՒԻՐԸՏՈՒՈՒԹԻՒՆՔ Ի ԳԵՎԻԹԵ				
ՇԱՌՈՐԴԻ ՊԱՏ. ՈՐԲԱՄՄԻՑՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԱԶԻՐԵՒ				
Վահեմ. Տիգրան Փաշա Ապրօ (S. E. Tigrane Pacha d'Abro)	Եդ. աշ. ողջ.	975.—		
Պատ. Որբասիրաց ընկերութեան կատարած թաւտերական ներկայացումէն Որբանոցիս յատկացուած		1560.—		
Տիար Սարգիս Մելիքեան (Հանգուցեալ)		487.20		
Տեարք Միհրան Եւ Տիրան Արթինօֆ		200.—		
” Եագուպեան Եղբարք		195.—		
Տիար Ստեփիան Յովչաննէսեան, ի Մինիյէ		100.—		
” Մեղրաք Դաւիթթեան		97.20		
” Առաքել Մ. Պէրպէրեան		97.20		
Տեարք Սօրիեան Եղբարք		97.20		
Տիար Գր. Նիկողիմոսեան յԱղեքսանդրիա		97.20		
” Նշան Մամուլեան		50.—		
” Գրիգոր Գմբլմեան		50.—		
” Մեղրաք Օտապաշշեան		50.—		
Եդ. զրշ. ողջ	4057.20			

	ԵՎ. ԱՐ. ՊԵ.Հ.
ՓՈԽԱԳՐԻ	4057.20
Տիար Յարութիւն Ճէպէճեան	50.—
Տեալք Շահրողեան Եղբարք	50.—
” Ախվասարեան Ազնաւորեան	48.30
Տիար Մկրտիչ Պալըգճեան	20.—
” Սարգիս Պիլալիկեան	20.—
” Ցովշաննէս Աէմերճեան	20.—
” Կիրակոս Չուլագեան	20.—
” Ա	20.—
” Ոմն	50.—
	<hr/> 4356.10

Որբասիրաց Ընկերութեան ձեռօք ծախ-	
քեր, երթեւեկութեան, նամակա-	
դրոշմի եւ յայտարարութեանց	
համար	117.—
Երեք չէքերու համար վճարուած վարձք	19.20
	136.20
ԵՎ. ԱՐ. ՊԵ.Հ.	4219.30
Որոյ փոխարէնը ստացուած է Անգլ. Ասկի 43.5.7.	

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ. Ի ՓԵՐԻ Զ

ՀԱՅԿԱԳԵԱՆ ՌԱՍՈՒԹԻՄԱՍԻՐԱՑ Ընկերութիւն . . .	500.—
Տիկին Ե. Յակովլեան - Թագաւոր Փաշա . . .	250.—
” Լեւոն պէյ Քաբամաճեան	100.—
” Տ. Էգնաեան	30.—
Տիար Ա. Էգնաեան	200.—
” Խ. Կերսէսեան	100.—
” Յ. Կաքէնտէր	100.—
	<hr/> 1280.—

	ԳՐԱՆՔ
ՓՈԽԱԳՐԻ	1280.—
Տիար Կ. Բէհիլավնեան	100.—
” Ա. Արվանեան	100.—
” Յ. Աոլանկիւլ	100.—
Տեալք Թընկըր Եղբարք	100.—
” Զօրայեան Եղբարք	50.—
” Աամուէլեան Եղբարք	50.—
Տիար Ար. Սպարթալեան	50.—
” Յ. Արայէլեան	50.—
” Տ. Քէմհաճեան	50.—
” Թ. Քարակէօղեան	50.—
” Յ. Յովսէփեան	50.—
” Մանուկեան	50.—
” Ա. Սեթեան	50.—
” Ա. Յովսէփիմեան	50.—
” Ուափայէլ Մարկոսեան	50.—
Տօքթօր Սրբլեան	40.—
” Խան Քէլէկեան	40.—
” Տ. Տօղամաճեան	30.—
” Մ. Արվաճեան	30.—
” Բ. Բուշեան	20.—
” Ա. Աշճեան	20.—
” Մ. Քալըաքճեան	20.—
” Գ. Էքմէքճեան	20.—
” Ն. Համբարձումեան	20.—
” Ա. Ճէվահիրճեան	20.—
” Մ. Սարըեան (Անվերս)	20.—
” Տօքթօր Մ. Քէմհաճեան	20.—
” Խ. Սարաճեան (Դավթէժ)	20.—
	<hr/> 2550.—

	Գրանց.
Փոխադրի	2550.—
Տիար Մ. Մինասեան	10.—
„ Ե. Շնորհքէ բուպլի 15	39.80
„ Խ. Հիւնքեարպէյէնտեան	20.—
Գրանց	2619.80
Նուիրեալ ի գանձապահէ իր տոկոս .	41.50
Զեղելով ծակութը	6.15 35.35
Գրանց	2655.15

Սոյն գումարի փոխարէնը խնամակալուժեանս յանձնուած է Անդլ. Ոսկի 105 Շլ. 7 բնի 6:

ՆՈՒԻՐԱԾՈՒՈՒԹԻՒՆՔ Ի ԼՈՒՏՈՒ

	Անդլ. Ոսկի Շլ.
Մեծ. Տեալք Գ. Եւ Կ. Կիւլպէնկեան	10 —
„ Տիար Կ. Ներսէսեան	5 —
„ „ Յ. Զիկանեան	3 —
„ „ Մ. Ներսէսեան	3 —
„ „ Ա. Կիւլպէնկեան	3 —
„ „ Ո. Սելեան	2 —
„ „ Ե. Զիզմէճեան	2 —
„ „ Յ. Գէորգեան	2 —
„ „ Մ. Կիւտէնեան	1 15
„ „ Յ. Կիւլպէնկեան	1 5
„ „ Մ. Պապաեան	1 5
„ „ Տ. Արսլանեան	1 5
„ „ Ա. Նէղէվիլ	— 16
Անդլ. Ոսկի	36 6

	Անդլ. Ոսկի Շլ.
Փոխադրի	36 6
Մեծ. Տիար Գ. Եւ - Թարազի	— 16
„ „ Ք. Կիւլպէնկեան	1 —
„ „ Մ. Քըլըճեան	— 16
„ „ Ա. Սօրկուճ	1 —
„ „ Ոմն	— 2
Անդլ. Ոսկի	40 —

ՆՈՒԻՐԱԾՈՒՈՒԹԻՒՆՔ Ի ՄԵՇԵՍԹԱԸ

	Անդլ. Ոսկի Շլ.
Մեծ. Տեալք Ա. Մամլոչեան 2 Տարւան	—
Համար	15 —
Մեծ. Տեալք Թօբալեան Եղբարք	10 —
„ „ Գէորգ Մուրատեան Որդիք .	10 —
„ „ Ֆնտըլեան Որդիք, անցեալ Եւ այս Տարւանը	10 —
Մեծ. Տեալք Գոյումճեան Եղբօրորդիք . անցեալ 4 Տարւանը	8 —
Մեծ. Տիար Ս. Եալտըզճեան	5 —
„ „ Տիգրան Մուրատեան	5 —
„ „ Սարգիս Մանուկեան Որդիք .	5 —
„ „ Մարտիրոս Թօքադեան	5 —
„ „ Միհրան Մանուկեան	5 —
„ „ Յոհ. Անդրէսսեան	5 —
„ „ Կ. Պասմաճեան	5 —
„ „ Ա. Քարակէօվեան	5 —
„ „ Թ. Գ. Արագեան	5 —
„ „ Յ. Մարանեան	5 —
Անդլ. Ոսկի	103 —

	ԱՆԳԼ. ՈՒՂԻ	ՇԱՀԼ.	ԲԵՒԻ
Փոխադրի	103	—	—
Սիար Ա. Եղիազարեան	5	—	—
, , Պ. Գրիգորիսեան եւ Ընկ	5	—	—
, , Ստեփան Խիլիքձեան	5	—	—
, , Քրէնկեան	5	—	—
, , Սարգիս Քոյշումձեան	4	—	—
, , Արմենակ Սիւզմէեան	4	—	—
, , Մ. Աղնաւորեան	4	—	—
, , Կրօնիկ Բաբազեան	3	—	—
, , Քնաձեան Որդիք	3	—	—
, , Ստամպօլուեան եւ Ընկք	3	—	—
, , Ստեփան Սպարթալը	3	—	—
, , Գէորգ Էսայեան	3	—	—
, , Աստարձեան Եղբարք	3	—	—
, , Միհրան Բաբազեան	3	—	—
, , Միհնաս Պապաեան	2	10	—
, , Թօաֆձեան	2	—	—
, , Տամատեան	2	—	—
, , Յակոբեան եւ Որդիք	2	—	—
, , Քամպէրեան	2	—	—
, , Յ. Բաբազեան եւ Որդիք	2	—	—
, , Սարգիս Թամալախմէեան	2	—	—
, , Միհրան Մուրատեան	2	—	—
, , Տ. Տառուեան	2	—	—
, , Կահապետեան	2	—	—
, , Կ. Հէղութեան (Մարտիլիա)	2	—	—
, , Թ. Սպարթալը	1	—	—
, , Մ. Սէմէրձեան	1	—	—
, , Զէնոբեան	—	5	—
ԱՆԳԼ. ՈՒՂԻ	180	15	—

	ԱՆԳԼ. ՈՒՂԻ	ՇԱՀԼ.	ԲԵՒԻ
Փոխադրի	180	15	—
Պատարագամատոյցի վաճառումէ	—	2	6
Գանձապահ Տիար Եղիազարեանէ, իր քովը պահուած գումարին տոկոսը 5%	14	4	5
ԱՆԳԼ. ՈՒՂԻ	195	1	11

ԱՅԼԵԽԱՅԼ ՆՈԽԵՐՆԵՐ

ՄԵՇԱԾՈՒՔ ԻՇԽԱՆ Գ. ԼՈՒՄԻՆԵԱՆ, Ի ՓԱՄԻՋ.
Քսան օրինակ Գրանս - Հայերէն մեծ բառարան, Ա. մաս:

ՆՈՅՆ.

Մէկ տարեկան „Համալսարան“ հանդէս եւ մէկ օրինակ
“Որբունի - Բազմավէպ” :

ԳԵՐ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ,
Ի ԶՄԻՒԹԻՆԻԱՎ.

Մէկ տարեկան “Բանասէր” հանդէս:

ԱՐԺ. ՆԵՐՍԻ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՆԻԵԼԵԱՆ, Ի Կ. ՊՈԼԻՄ.
Տարեկան “Արեւելք”, օրաթերթ եւ “Բիւրակն”, շա-
բաթաթերթ: Նյոնպէս մէկ օրինակ “Ժողովրդական
Տարեցոյց” :

ՄԵՇ. ՄԵԼՔ. Ա. ԴԱՒԻԹ - ԲէԿ, Ի ՓԱՄԻՋ.
Իր “Լուսինեանք”, երկասիրութեանէն 300 օրինակ:

ՊԱՏ. ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՆԱՅԻ.
Խնսուն կտոր գըքեր եւ գըքշիներ:

ՄԵՇ. ՑՈՎՃԱՆԱԿ ԱՆԴՐԻԱՍԵԱՆ, Ի ՄԱՆՉԵՍԹԸՐ.
Տարեկան “Բանասէր”, հանդէս:

ՄԵՇԻ. ՍԱՐԳԻՍ ԵՎՀԱԶԱՐԵԱՆ, Ի ՄԱՆՉԵՍԹԸՐ.

Տարեկան “Հանդէս Ամսօրեայ,,:

ՄԵՇԻ. ՅՈՎԱԿԻՓ ԻՍԿԻՆՏԷՒՐ, Ի ՓԱՐԻԶ.

Տարեկան 2 օր. “Անահիտ,, Հանդէս, եւ 5 օրինակ
“Որբունի-Բազմավէպ,,:

ՄԵՇԻ. ԼԵՒՈՆ ԵՎՀԱԶԱՐԵԱՆ, Ի ՓԱՐԻԶ.

Մէկ օր. “Հաւաքածոյ Ժողովրդական երգերու,,:

ՄԵՇԻ. ՏԻԳՐԱՆ ՊԶՏԻԿԵԱՆ, Ի ԲՈՐԹ-ՍԱՅԻՏ.

Մէկ օր. “Որբունի-Բազմավէպ,,:

ԱՐԺ. ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԱԶԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Զատկի առթիւ մէկ ոչխար:

ՆՈՅՆ.

Մէկ օր. “Որբունի-Բազմավէպ,, 2 Աւետարան, 1 ժա-
մագիրք փոքրադիր:

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ Ա. ԻՒԹԻՒՃԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Զատկի առթիւ մէկ ոչխար: Ծննդեան տօնին՝ բաժլավու:

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ Ա. ԿԻՒՎԵԶԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Յունիս ամսոյ մէջ լինչցք տուին Տէֆթէրա գիւղը,
իրենց պարտիզին մէջ, ուր Որբանոցին աշակերտք եւ
պաշտօնեայք շատ հաճելի օր մը վայելեցին:

ՆՈՅՆՔ.

Մէկ կողմէ ծիրան:

ՄԵՇԻ. ԱՐԹԻՆ ՄԵԼԻՔԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Իր երախայի մկրտութեան երեկոյին տանը մէջ լինչցք
մը տուաւ աշակերտաց եւ պաշտօնէից: Դարձեալ
ՄԵՇԻ պահոց առաջին օրը՝ պահոց ճաշ մը, իր պար-
տիզին մէջ:

ՆՈՅՆ.

Ինչպէս անցեալ՝ նոյնպէս եւ այս տարի, Ս. Մակարու-
վանքը գնալու առթիւ՝ աշակերտք հիւրընկալուեցան
իր Քիթրէայի ամարանոցին մէջ, եւ մեծարուեցան
իր մօր Տուտու հանըմի եւ քրոջը, Կարին հանըմի
կողմէ:

ՆՈՅՆ.

Իր տան պարտիզին մէջ ծիրան վայելելու հրաւիրեց
աշակերտները: Դարձեալ՝ զգից կողով մը նարինջ:

ՄԵՇԻ. ՅԱՐՈՒԹԻՒԽԵԱՆ ՃԵՐՄԱԿԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Մէկ պարկ ընտիր ալիւր:

ՄԵՇԻ. ՎԱՐԴԻԱՆ Յ. ԽԱՆԻԿԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Ս. Վարդանանց տօնին օրը հացկերցիթ մը տուաւ:

ՄԵՇԻ. ՍԱՐԳԻՍ ՏԵՅԻՐՄԵՆՃԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Իր անուան տօնին օրը հացկերցիթ մը:

ՆՈՅՆ.

(Վանք այցելելու առթիւ) Ոչխար մը:

ՄԵՇԻ. ԹՈՐՈՍ ՍԱՀԱԿԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Աշակերտաց Տէֆթէրա գնալուն առթիւ իր կողմէն ալ
կառք մը վարձեց անոնց երթեւեկութեան համար:

ՄԵՇԻ. ՅԱԿՈԲ ԵՍԱՅԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Պատկերի մը գծագրութեան փոխարէն գրպանի ժա-
մացցց մը ուսանողներէն միջն:

ՄԵՇԻ. ԽԱՆՉԵՐ ԱՆՍԼՐԼԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Իր երախային մկրտութեան առթիւ հացկերցիթ մը:

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԳԵՂՐԴԵԱՆ, Ի Ս. ՄԱԿԱՐ.

Նուի բեց 5 հաւ:

ՄԵՇԻ. ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ, Ի Ս. ՄԱԿԱՐ.

Չորս օխա մեղք:

ՄԵԾ. ՊԵՏՐՈՍ ՊՕՂՈՍԵԱՆ, ԿԱՐՆԵՑԻ, Ի ՔԻԹՐԵԱ. Աշակերտաց Ս. Մակարու վակիքն դառնալու միջոցին՝ հացկերոյի՛մ մը:

ՏԻԿԻՆ ՍԱՓԻՐԱ ՍՏԵՓԱՆԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ. Գառնուկ մը:

ՄԵԾ. ԱԼԵՔՍԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ. (Վանքն այցելելու առթիւ) Գառնուկ մը:

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ Գ. ՍՈՒԼԹԱՆԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ. Զանազան առիթներով շաբարեղէնք:

Պ. ԼՈՒԹՓԻԿ ԳԼՐՄԸՋԵԱՆ (Նախկին աշակերտ Կրթարան-Որբանոցիս) ՈՒՍՈՒՑԻՉ, Ի Ս. ՄԱԿԱՐ: Մէկ ոչխար, երկու սագ, եւ այլ ուտեսաներ:

ՏԵԱՐՔ ՅԱԿՈԲ ՅՈՎԱՆԻՔԵԱՆ ԵՒ ՍԵԴՐԱՔ ԹՈՒԼՈՒՄ-ՃԵԱՆ, Ի ԼԱՐՆԱՔԱ: Որբանոցիս աշակերտաց կղղիքն դուրս կամ դէպի ի նիկոսիա ուղեւորութեան առթիւ, նոյնպէս Որբանոցիս վերաբերեալ փոխագրութեանց եւ մաքսային դործողութեանց համար միշտ ընծայած են սիրայօժար աջակցութիւն եւ աշխատութիւն:

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին պարզեւաբաշխութեան առթիւ (1900 Յուլիս 1 ին) Գերամծար Մր. Սբէնսըթի արտասանած խօսքերուն թարգմանութիւնը:

“Ի սկզբանէ անտի մեծ համակրութիւն զգացած եմ դէպի այս հաստատութիւնը, եւ ուրախ եղած եմ տեսնելով որ արդինքները լիովին կ'արդարացնեն իմ զգացումներս։ Այս օրուան հանդէսը, աշակերտաց աշխոյժ եւ բարեկիրթ երեւոյթը, եւ նոցա արտասանութեանց բնական ու պատշաճ հանգամները՝ կը հաստատեն որ վերջին մէկ տարւան

ընթացքին մէջ շատ լաւ գործ կատարուած է հոս։ Աստ աւանդուած արհեստներուն գալով՝ անոնց մեծ կարեւորութիւն կ'ընծայեմ, եւ կը փափաքիմ որ կիպուսի ուրիշ գորոշներն ալ հետեւելով այս օրինակին՝ արհեստ ուսուցանեն իրենց ուսանողներուն։

Կը վերջացնեմ խօսքս, շնորհաւորելով պ. ՔիւրքՃեանը որ այսափի յաջող արդիւնք մը կարողացած է յառաջբերել։

Nicosia, 28 February 1901.

I accompanied the Inspector of Schools, Archdeacon Spencer, to the prize-giving at the Armenian Orphanage, last July, and was much pleased with all I saw and heard. The English recitations were excellently delivered and were evidently understood and appreciated by the speakers.

I also had the pleasure of spending a day with Mr. Kurkdjian and the boys during their summer holidays in the mountains where they were quartered in the monastery of St. Macharius, and I often meet them in Nicosia. The boys appear neat, well fed, and under good discipline, and withal very happy. I consider that this institution is worthy of all praise.

(Rev.) Frank D. Newham

B. A. Cambridge

Gouvernement Instructor in English, Head of the English School, and assistant chaplain.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ:

Դպրոցներու Տեսուչ Արժ. Սբէնսըթի լնկերութեամբ ներկայ գտնուեցայ հայ Որբանոցին պարգեւաբաշխութեան հանդիսին, անցեալ Յուլիսի մէջ, եւ շատ գոհ մնացի բոլոր լսածներէս եւ տեսածներէս։

Անդիւրէն արտասանութիւններն ամենալաւ կերպով
խօսուեցան եւ յայտնի էր որ արտասանողք անոնց իմաստն
եւ ոգին կ'ըմբռնէին:

Հաճոյքն ունեցայ նյոնպէս Պ. Քիւրքճեանի եւ տղայոց
հետ օր մը Լերանց վրայ անցնելու, Ս. Մակարու վանուց
մէջ, ուր հաստատուած էին իրենց ամառնային արձակուրդին
միջոցին. նաեւ յաճախ կը հանդիպիմ իրենց ի հիկոսիա:

Տղայք ամէն ատեն կը տեսնուին՝ մաքուր, աղէկ սնու-
ցուած եւ լաւ կարդապահութեան ներքեւ, եւ միանդամայն
շատ ալ երջանիկ:

Ես այնպէս կը նկատեմ թէ այս հաստատութիւնն
ամէն գովեստի արժանի է:

ԳՐԱՆԳ. Տ. ՆԻԿԱՆՏ

Պ. Ա. ՔԷՄՊՐԵՏԻ

Կառավարական Ռուսուցիչ անգլիերէնի,
Պետ Անգլիական դպրոցին եւ օգնական-
երէց:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵԿՇԻՐ

Մ Ա Խ Տ Տ Ք

1. Մ Ա Ր Տ 1900 —

	Ա Վ Ա Ր Ա Բ Ա Վ Ա Ր Ա Բ	Հ Ա Յ Ա Ր Ա Բ Հ Ա Յ Ա Ր Ա Բ	Բ Ա Տ Ա Ր Ա Բ Բ Ա Տ Ա Ր Ա Բ
Հաստ նախորդ հաշուեկշոյն Տնօրէն Խորհրդոյն ձեռքը գտնուած կշիռը	17	9	6
Հաստ նախորդ հաշուեկշոյն Գանձապահ Տիար Եղիսա- պարեամի ձեռքը գտնուած կշիռը	113	9	—
Դաշնութէն Մեծ. Պետրոս Էֆ. Կարապետեանէ, իւր Յ Սաներուն Տարեկանը	30	—	—
Պատ. Որբասիրաց Ընկերութեան Ժորժիւ " Բարեգործական Ընկերութենէիր Մա- նին 6 ամսեայ Թոշակը	43	5	7
Գիշերօթիկ Թոշակաւոր աշակերտներէ	92	—	—
Երթեւեկ " " " " "	7	—	—
Հասոյթ Թատերական Ներկայացումէ	5	17	—
Գորիք, թէփի եւ շայաքի վաճառուումներէ	1	15	7
Մուլրատուութիւնք Փարիզու պատ. Մասնաժողովոյ Ժորժիւ	105	7	6
Մուլրատուութիւնք Լոնտոնի պատ. Մասնաժողովոյ Ժորժիւ	40	—	—
Մուլրատուութիւնք ի Մանչեսթեր " Կիպրոս՝ Տնօրէն Խորհրդոյ Ժորժիւ Բարեսէր ուսն Կ. Պոլսէ ի յիշատակ իր վաղամեռիկ ոսդեկի	195	1	11
	7	3	—
	5	—	—
	668	9	1
<hr/>			
ՊԱՀԵՍՏԻ ՀԱՇԻ			
Հաստ նախորդ հաշուեյն փոխադրեալ գումարը . . .	200	—	—
Բաստ ընդհանուր հաշուեկշոյն Մարտ 1/1901 պահեստի փոխադրեալ գումարը	150	—	—
	350	—	—
	668	9	1

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ


28 ՓԵՏՐՈՒՅԹ 1901

Ե Լ Ք

	Ա Վ Ա Ր Ա Բ Ա Վ Ա Ր Ա Բ	Հ Ա Յ Ա Ր Ա Բ Հ Ա Յ Ա Ր Ա Բ	Բ Ա Տ Ա Ր Ա Բ Բ Ա Տ Ա Ր Ա Բ
Նուէր Տնօրէն Ցեսուէ Տիար Ա. Քիւպրծնանի	50	—	—
Կրթարան Որբանոցին միամիայ ծախուց գումարն ըստ Պատ. Տնօրէն Խորհրդոյն հաշուեցոյցին	335	11	7
Անցեալ Տարեշրջանի Տեղեկագրոց տպագրութեան ծախոք Մարտ 1/1901 կշիռ պատրաստ գրամի Տնօրէն Խորհրդոյն Ժեռքը	9	4	11
Մարտ 1/1901 կշիռ պատրաստ գրամի Տարեկանի Տիար Եղիսաբետնանի Ժեռքը	14	19	1
Մարտ 1/1901 պահեստի հաշուեյն փոխադրեալ գումարը	108	13	6
	150	—	—
	668	9	1

1981-09-14-1720

1981-09-14-1720





2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0050318

12/12

